

բուժիչն մը, վստահարար մեր ձեռքէն չէինք կորսնցնէր Հայաստանը :

Միթէ զիմադրութեան ու յուսահատական դուստարի մը բնոյթը ստացող մաքառումներով չէ՞ր որ Սարգարսպատի եւ Գարաքիլիսէի փառքը դարձնէր Արարատեան հայութիւնը, — փառք մը՝ որ արժեց մեր դարաւոր մշակոյթին, հեծկտուքներուն, ինդրազիրներուն եւ քրիստոնէական բոլոր սպասումներուն եւ քառոյներուն տասնապատիկը :

Այսօրուան կամ երէկուան Հայաստանի Հանրապետութիւնը յիշողութիւններու եւ երեսակայութիւններու մէջ անգամ չէր կրնար տեղաւորուիլ, եթէ երբեք հայութիւնը չզիտար կոռուիլ ու յաղթել: Եւ եթէ երկու օրուան (24-26 Մայիս 1918) զիւցազնամարտն իսկ բաւական եղաւ, որպէսզի նախ 11,000 եւ ապա 50,000 քառ. քիլ. մօտեցող հայրենիք մը ըստանայինք, հապա ինչո՞ւ այսպիսի նուաճում մը բռնադրօսիկ եւ անբնական կը համարենք, երբ թուրքերն են անոնց հեղինակները :

Յաղթանակներ, թրքութիւնը շատ է տարեր, ինչպէս եւ երթարկուեր է յաճարակի պարտութիւններու, բայց այն ինչ որ շահեցաւ Մուսթաֆա Քեմալը՝ Անկախութեան պայքարով եւ Ազգային Ուխտով, նմանը եւ հաւասարը չունի: Այս կուրը վերջինն էր. թուրքերը կամ պիտի յաղթէին ու ապրէին, եւ կամ պիտի յարստուէին ու քաշուէին պատմութեան թատերաբեմէն: Ու թրքութիւնը ըմբռնելով վտանգը, մղուած գո՛ւտ ազգութեան եւ հայրենիքի գաղափարներուն ներշնչած կախարդանքէն, կոտեցաւ, յաղթեց ու տէր մնաց իր հայրենիքին :

Ազգութեան դադարիւրը, լեզուն, մշակոյթը, աւանդութիւնները, մտածողութեան եւ ձգտումներու նոյնութիւնը՝ ամբողջական յինականներն ու կրօնները չեն հայրենիքի: Ասոնց պէտք է պատշաճի եւ կանխէ ամենէն հիմնական նախապայտանք, — բիրտ ուժին ու Ֆիզիքական ընդունակութիւններուն հաւասարը եւ բովանդակութիւնը :

Թուրքերու հայրենիքի մասին ունեցած ըմբռնողութիւնը մերինէն բարդ ու լրիւ է: Ասոր համար է որ չենք կրնար թափանցել անոր, եւ կը զուարճանանք բառազրիտական

մարզանքներով, թէ վաքանը կամ հնամենի օրսուռն ինչքա՞ն կը համապատասխանեն ընդդժուած դադարիւրին: Մինչդեռ բաւերու իմաստը միեւնոյնն է թուրքին ու հայուն առջեւ: Մենք մեր «երկիր»ով ի՞նչ տարբերութիւն կը ներկայացնենք «Մէմլէֆէք»էն, որ «Հայրենիք»ին պարզուկ եւ դեղջուկ ձեւն է, եւ որը չի յիշատակեր իսկ ընդզիմախօս ընկ. Ռուբէնը: Վաքանէն աւելի ընդհանրացած Մէմլէֆէք-ի հասկացողութիւնը՝ բուխերիկի եւ կըտուրի, արտի եւ առուի, գոմի եւ հիւրանոցի սէրերուն տարածուած պատկերացումն է:

Պէտք է մտնել թուրքին հիւղակին ու արտին մէջ, խաներու եւ տաղաւարներու անկիւնները, վրաններու եւ խրամներու տակերը, մինչեւ համալսարաններու եւ զօրանոցներու դարպասներէն ներս, ու ունկնդրել թէ մեր արհամարհած թուրքերը ի՞նչ սրտառուչ եւ զգացալատ տաղեր ու աշուղական մեղեդիներ ունին «Տեռաւոր մէմլէֆէք»ը, արփազեղ երկիրը եւ անոր օգին ու ջուրին հրաշագործութիւններն ու փառքերը թրթռացնող:

Ասիկա դեռ, շինականին ու հողագործին, հովիւին ու մշակին անպաճոճ քնարն է, որ ոչինչով չի նսեմացներ կրթուած եւ դաստիարակուած թուրք երիտասարդութեան, ուսանողութեան ու սպայութեան մարտազուր քայլերգները՝ միշտ վաքանի շունչին ու ոգին խօսուն արտայայտութիւններովը:

«Վաքան պիզիմ նահըմըզ»ը (հայրենիքը մեր հոգին է) սերունդներու նուաճումը ունի արձանագրած: Թափ առնող, վերամկրտող եւ փայլատակող թուրք ազգային շարժումը պատկերու խարխափումները շատոնց մոռցած ու սրբած է: Ո՞վ է Գուրանով եւ «Հատիս»ներով յափշտակողը: Արհամարհանքի փոշին նետած է անարժէք անօթներուն վրայ՝ նորագարդ թուրք զիտակցութիւնը:

Միտհաթեան Սահմանադրութեան ուրուագծած բարենորոգչական քայլերունց յաջորդող երիտասարդ թուրքերու անարին յիշարիտութիւնը, որ միջոց մը զմայլանքի եւ հիացումի արձագանգներ գտաւ եւրոպական քաղաքական եւ մտաւորական շրջանակներու մէջ, հայրենիքի արդիական ըմբռնումին նըպաստող ճշմարիտ դպրոց մըն էր: «Թիւրք 0-